Կազմված է 29.01.2021թ.

Բաղկացած է 17 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ 2

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

«Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն հասարակական կազմակերպության հիմնադիր ժողովի որոշմամբ՝

« 29 » հունվարի 2021թ.

Կազմակերպության գլխավոր քարտուղար՝

Ստորագրություն

Վ. Հովեյան

**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝

« 10 » 02. 2021թ.

Գրանցման N 211.171.1162593

ՀՎՀՀ 08424187

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ստորագրություն / Ավետիսյան Արմենուհի / անուն, ազգանուն

# «ԲԱՅԱԶԵՏ» ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2021թ.

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ չհետապնդող հասարակական միավորում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Սահմանադրության, ՀՀ օրենսդրության և սույն կանոնադրության համաձայն:

1.2 Կազմակերպությունը, օրենքին համապատասխան, ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը:

1.3 Կազմակերպության գործունեությունը հիմնված է օրինականության, խտրականության բացառման, անդամների շահերի ընդհանրության, անդամների կամավորության, բարեխղճության, ինքնակառավարման, հաշվետվողականության, իրավահավասարության, հրապարակայնության, համահավասարության, փոխգործակցության և անդամների՝ իրենց կարծիքն ազատ արտահայտելու սկզբունքների վրա:

1.4 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպության աշխատանքային լեզուներն են՝ հայերենը, ռուսերենը և անգլերենը:

1.6 Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում, հայերեն գրված տեքստը համարվում է որոշիչ:

1.7 Կազմակերպության լրիվ անվանումն է «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն հասարակական կազմակերպություն, կրճատ՝ «Բայազետ» կենտրոն ՀԿ

- ռուսերեն՝ Общественная Оорганизация Армянский Центр аналитических исследований 'Баязет', կրճատ՝ ОО Баязет Центр
- անգլերեն՝ "Bayazet" Armenian Analytical Research Center non-governmental organization, կրճատ՝ Bayazet Center NGO

1.8 Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից:

1.9 Կազմակերպությունը ունի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:

1.10 Կազմակերպությունն օգտվում է իրավաբանական անձի, այդ թվում հասարակական կազմակերպության համար օրենքով սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

1.11 Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

1.12 Կազմակերպության շահառուներն են՝ ՀՀ քաղաքացիները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ի շահ որոնց ուղղված և իրականացվում է Կազմակերպության կանոնադրության 2.1. կետով նախատեսված գործունեության առարկան և նպատակները:

1.13 Կազմակերպության անդամները պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների համար, իսկ Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:

1.14 Կազմակերպությունը կարող է իր կանոնադրական նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններ ներկայացնել ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին:

1.15 Կազմակերպությունը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:

1.16 Կազմակերպությունը կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային կազմակերպությունների, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ:

1.17 Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու մասնաճյուղեր կամ առանձին կազմակերպություններ:

1.18 Կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:

1.19 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ 1201, Ավետիք Քալաշյան փ., տուն 15

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

2.1.1 նպաստել Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացմանը սոցիալական հետազոտությունների, ոչ ֆորմալ կրթության և իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով:

2.1.2 նպաստել հանրային քաղաքականությունների մշակմանը՝ ՀՀ-ում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) կառուցողական երկխոսության ամրապնդմամբ,

2.1.3 նպաստել հանրային ֆունկցիոնալ մտքի կազմակերպմանը, հանրային և ինտելեկտուալ առկա ներուժի նյութականացմանը,

2.1.4 նպաստել ՀՀ-ում մարդու իրավունքների, մասնավորապես՝ կանանց, երիտասարդների, երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը,

2.1.5 նպաստել հանրապետությունում հիմնադրույթային վերափոխումների հայեցակարգերի ձևավորմանը և մշակմանը՝ համակողմանի հետազոտություններով, խորհրդատվությամբ և հանրային իրազեկման միջոցառումներով,

2.1.6 իրականացնել և հրապարակել վերլուծություններ քաղաքագիտության, տնտեսագիտության և սոցիոլոգիայի հատման միջակայքում՝ օժանդակելով Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, քաղաքականություն մշակողներին հասկանալու և լուծելու ժամանակակից հայ հասարակության խնդիրները,

2.1.7 կազմակերպել անվճար տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ գիտաժողովներ, դասընթացներ, դասախոսություններ, սեմինարներ, գործնական պարապմունքներ, քննարկումներ , թարգմանություններ, կրթական, հրապարակախոսական, վերլուծական, հետազոտական նախագծեր, ինչպես նաև հրապարակել և տարածել գիտական, վերլուծական, պատմական, լրատվական և այլ տեղեկատվական նյութեր,

2.2 Կազմակերպությունը կարող է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ, ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ինչպես նաև ցանկացած իրավաբանական անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը, նպատակային խնդիրների իրականացմանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:

3.2 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը, իսկ իրավաբանական անձի դեպքում լիազորված անձը՝ իրավասու մարմնի որոշման հիման վրա, գրավոր դիմում է Կազմակերպության Գլխավոր քարտուղարին՝ լրացնելով Կազմակերպության կողմից նախապես մշակված դիմումի ձևաթուղթը: Գլխավոր քարտուղարի դրական եզրակացության դեպքում թեկնածուն անցնում է 3 ամսյա փորձաշրջան:

3.3 Մինչև տասնչորս տարեկան անչափահասը Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

3.4 Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

3.5 Փորձաշրջանի ավարտին թեկնածուն ներկայանում է Խորհրդի նիստին, որի ժամանակ տրվում է անդամի կարգավիճակ, կամ դիմումը մերժվում է:

3.6 Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից՝ իր դիմումի համաձայն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավասու մարմնի որոշման հիման վրա:

3.7 Անդամը հեռացվում է կազմակերպությունից, եթե թույլ է տալիս ՀՀ օրենսդրության, Կանոնադրության, Կանոնակարգի, իր պայմանագրի, Կազմակերպության անդամների Համագումարի (այսուհետ՝ Համագումար), Կազմակերպության ընտրովի կառավարում, Վերստուգիչ հանձնաժողովի որոշումների խախտում: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով

3.8 Կազմակերպության անդամությունից հեռացումը տեղի է ունենում Խորհրդի որոշմամբ:

3.9 Կազմակերպությանն անդամագրման, անդամակցությունից զրկման և անդամակցությունից ինքնակամ հրաժարման գործընթացները կարգավորվում են սույն Կանոնադրությամբ:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

4.1.1 Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում, բացառությամբ կազմակերպության անչափահաս անդամների,

4.1.2 ներկա լինելու Համագումարի, Խորհրդի, ինչպես նաև Կազմակերպության ստորաբաժանումների նիստերին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով,

4.1.3 Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով Խորհուրդին, Գլխավոր քարտուղարին կամ ԿՎՀ-ին ներկայացնելու դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,

4.1.4 Կազմակերպության վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները,

4.1.5 Համագումարի կողմից սահմանված դեպքերում և կարգով օգտվելու նրա ծառայություններից,

4.1.6 Մասնակցելու Կազմակերպության կողմից կազմակերպվող միջոցառումներին՝ դրանց կազմակերպման ընթացակարգին ու ձևին համապատասխան,

4.1.7 Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

4.1.8 մինչև տասնչորս և տասնչորսից մինչև տասնութ տարեկան անդամները օգտվում են Կազմակերպության անդամին վերապահված բոլոր իրավունքներից և կրում են նույն պարտականությունները, բացառությամբ Խորհրդի կամ ԿՎՀ անդամ ընտրելու և ընտրվելու իրավունքից,

4.1.9 Կազմակերպության ԿՎՀ-ի և Համագումարի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Կազմակերպության կամ դրա անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Դիմումը կարող է

տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

4.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

4.2.1 կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները, կառավարման և ԿՎՀ-ի որոշումները,

4.2.2 բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

4.2.3 հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման ու դրա պահպանման մասին,

4.2.4 վճարել անդամավճար, որի ձևը, չափը և վճարման կարգը սահմանում է Խորհուրդը

4.2.5 բարեխղճորեն կատարել իր պայմանագրում նշված կետերը, իր վրա դրված պարտականություններն ու իրեն տրված հանձնարարությունները,

4.2.6 Կազմակերպության անչափահաս անդամների պարտականությունների առանձնահատկություններ չեն նախատեսվում:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

5.1.1 իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

5.1.2 բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,

5.1.3 ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից,

5.1.4 ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ

5.1.5 օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերելու, վարձակալելու և օգտագործելու անշարժ, շարժական և օրենքով չարգելված այլ գույք,

5.1.6 տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին,

5.1.7 կազմակերպելու և անցկացնելու խաղաղ հավաքներ ու ակցիաներ

5.1.8 օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական

շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

5.1.9 համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը;

5.1.10 իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն՝ իր Կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալու դրա մասնակից,

5.1.11 կնքելու օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ

5.1.12 ինքնուրույն կազմավորելու և տնօրինելու իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, ՀՀ-ում և այլ պետություններում ստանալու վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով,

5.1.13 համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

5.1.14 կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

5.2 Կազմակերպությունը պարտավոր է

5.2.1 վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,

5.2.2 «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի,

5.2.3 պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը.

5.2.4 սույն օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով

ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,

5.2.5 Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին *կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝* պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,

5.2.6 Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,

5.2.7 Իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության Գլխավոր քարտուղարի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը

5.2.8 ցանկացած մարմնի կողմից որոշում կայացնելու դեպքում, ի դեմ այդ մարմնի, ապահովել բոլոր անդամների և աշխատակիցների իրազեկվածությունը այդ որոշմանը վերաբերող մասով,

5.2.9 կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ

6.1 Կազմակերպությունը կարող է իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

6.2 Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են Համագումարը, Խորհուրդը և Գլխավոր քարտուղարը:

7.2 Կազմակերպության վերահսկողական գործառույթը վերապահված է Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովին (այսուհետ՝ ԿՎՀ):

7.3 Կազմակերպության կառավարման և վերահսկողություն իրականացնող մարմիններն ընտրովի են:

7.4 Կազմակերպության կառավարման և վերահսկողություն իրականացնող մարմինների անդամ կարող են դառնալ 18 տարին լրացած անձինք:

7.5 Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը բոլոր անդամների կամ նրանց կողմից ընտրված պատվիրակների Համագումարն է, որին պատկանում է Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

7.6 Համագումարը հրավիրում և վարում է Գլխավոր քարտուղարը՝ բացառությամբ Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

7.7 Համագումարը հրավիրվում է տարին մեկ անգամ՝ մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

7.7.1 Կազմակերպության Գլխավոր քարտուղարը նշանակում է հերթական համագումարի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև կազմում ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան հինգ օր առաջ էլեկտրոնային եղանակով, պատվիրված նամակով, զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին

7.7.2 Համագումարը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների երկու երրորդից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են ձայների բացարձակ մեծամասնությամբ (քվեարկության իրավունք ունեցողների մեծամասնություն):

7.8 Գլխավոր քարտուղարի հետ անհաղթահարելի տարաձայնությունների պարագայում Խորհրդի բոլոր անդամների կողմ լինելու դեպքում հրավիրվում է Համագումար ու քննարկման դրվում գլխավոր քարտուղարի պաշտոնանկության հարցը:

7.8.1 Համագումարի կողմից Գլխավոր քարտուղարի պաշտոնանկությանը կողմ որոշման դեպքում գլխավոր քարտուղարը զրկվում է իր զբաղեցրած պաշտոնից:

7.8.2 Համագումարի կողմից Գլխավոր քարտուղարի դեմ որոշման դեպքում Խորհրդի լիազորությունները դադարեցվում են, անցկացվում են Խորհրդի արտահերթ ընտրություններ:

7.8.3 Արտահերթ ընտրությունների միջոցով ընտված Խորհուրդը համարվում է ժամանակավոր, այն կրում է Խորհրդի բոլոր լիազորությունները մինչև նախորդ գումարման Խորհրդի լիազորությունների նախատեսված ավարտը: Կանոնադրությամբ ու Կանոնակարգով սահմանված դեպքերում բոլոր արտահերթ ընտրություններում ձևավորված մարմինների հանդեպ կիրառվում է միևնույն կարգավորումը:

7.9 Կազմակերպության արտահերթ Համագումար հրավիրվում է Գլխավոր քարտուղարի կողմից՝ Կազմակերպության անդամների մեկ երրորդի, ԿՎՀ մարմնի կամ Խորհրդի բոլոր անդամների պահանջով՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով ոչ ուշ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

7.9.1 Եթե Գլխավոր քարտուղարը հրաժարվում է արտահերթ համագումար հրավիրել, ապա արտահերթ համագումար հրավիրում է պահանջող կողմը՝ Կազմակերպության Գլխավոր քարտուղարի հրաժարականի և Խորհրդի կողմից նոր պաշտոնակատար ընտրելու օրակարգով: Խորհուրդը որոշում է արտահերթ ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 5 օրվանից առաջ էլեկտրոնային եղանակով, պատվիրված նամակով, զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

## 8. Կազմակերպության համագումարը՝

8.1 հաստատում է Կազմակերպության կանոնադրությունը, կատարում է փոփոխություններ կամ լրացումներ դրանում և (կամ) հաստատում է նոր խմբագրությամբ կանոնադրությունը,

8.2 հաստատում է կազմակերպության կառուցվածքը, որոշում է Կազմակերպության խորհրդի թվաքանակը, մեկ տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության խորհրդի անդամներին, փոփոխում է խորհրդի կազմը, վաղաժամկետ դադարեցնում է խորհրդի անդամների լիազորությունները,

8.3 երկու տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության գործադիր մարմին՝ Գլխավոր քարտուղար, որը ի պաշտոնե չի մտնում է Կազմակերպության խորհրդի կամ ԿՎՀ-ի կազմի մեջ:
8.4 վաղաժամկետ դադարեցնում է Գլխավոր քարտուղարի լիազորությունները,
8.5 մեկ տարի ժամկետով ընտրում Կազմակերպության ԿՎՀ անդամներին՝
8.5.1 աուդիտ իրականացնող անձին (աուդիտորին), եթե Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի: Աուդիտ իրականացնող անձը որոշումներ է ընդունում միանձնյա և չի կարող ընտրվել Կազմակերպության այլ մարմինների անդամ: Աուդիտ իրականացնող անձը եզրակացություն է տալիս Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման ու հաշվետվությունների վերաբերյալ, որոնք ներկայացվում են Համագումարի հաստատմանը,
8.5.2 վերահսկիչներին, ովքեր զբաղվում են Կազմակերպության անդամների ու աշխատակիցների իրավունքների պաշտպանությամբ, Կազմակերպության մարմինների և ստորաբաժանումների որոշումների օրինականության ապահովմամբ,
8.5.3 Կազմակերպության յուրաքանչյուր անդամ կամ աշխատակից կարող է դիմում ներկայացնել ԿՎՀ-ին, եթե նա համարում է, որ՝
8.5.3.1 Կազմակերպությունում ընդունվել են որոշումներ, որոնք խախտել են իր իրավունքները,
8.5.3.2 Կազմակերպությունում ընդունվել են որոշումներ, որոնք հակասում են ՀՀ օրենսդրությանը, Կանոնադրությանը կամ սույն Կանոնակարգին,
8.5.3.3 Կազմակերպությունում ընդունվել են որոշումներ, որոնք ակնհայտ հակասում են Կազմակերպության գաղափարներին, սկզբունքներին կամ նպատակներին:
8.6 դադարեցնում է Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և Կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,
8.7 քննարկում և հաստատում է Կազմակերպության խորհրդի և Գլխավոր քարտուղարի անցած տարվա գործունեության հաշվետվությունները, ներառյալ գույքի և դրամական միջոցների օգտագործման տարեկան հաշվետվությունները:
8.8 ընդունում է Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշումները, հաստատում է կազմակերպության փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը,
8.9 որոշում է ընդունում կազմակերպության լուծարման մասին, բացառությամբ՝ դատարանի վճռով լուծարումից,

8.10 դադարեցնում է կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կազմակերպության կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունները,

8.11 ստեղծում է այլ իրավաբանական անձ, որոշում է ընդունում այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին:

8.12 Կազմակերպության Համագումարը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Համագումարին մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Համագումարի մասնակիցների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

9. **Կազմակերպության Խորհուրդը՝**

9.1 համարվում է Կազմակերպության կառավարման կոլեգիալ մարմինը Կազմակերպության ժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

9.2 քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Կազմակերպության Համագումարի և Գլխավոր քարտուղարի իրավասությունների մեջ,

9.3 ընդունում և կատարում է փոփոխություններ, լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատում է Կազմակերպության ներքին կանոնակարգերը և աշխատակարգը,

9.4 նախապատրաստում է Կազմակերպության Համագումարը, սահմանում է կազմակերպության Համագումարի պատվիրակների քվոտան ըստ սույն կանոնադրությամբ սահմանված համամասնությամբ և կազմակերպության անդամների թվի,

9.5 հաստատում է Կազմակերպության ռազմավարական փաստաթուղթը (պլանը) և հսկում դրա կատարման ընթացքը,

9.6 հաստատում է Գլխավոր քարտուղարի և աշխատակազմի վարձատրության կարգը և պայմանները,

9.7 որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, ինչպես նաև հիմնարկներ, հանձնաժողովներ, բաժիններ, բաժանմունքներ, ակումբներ, աշխատանքային խմբեր ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց Կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն Կանոնադրությանը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին տալիս է լիազորագրեր, հաստատում կամ չեղյալ է համարում

Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարների որոշումները Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների տարածքային գրասենյակներ ստեղծելու և տարածքային գրասենյակների ղեկավարներ նշանակելու ու ազատելու մասին,

9.8 առաջարկություն է ներկայացնում Համագումարին տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ դրանցում մասնակցելու վերաբերյալ, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

9.9 առաջարկություն է ներկայացնում Համագումարին լրատվական միջոցներ, հիմնադրամներ ստեղծելու վերաբերյալ, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

9.10 առաջարկություն է ներկայացնում Համագումարին ոչ առևտրային կազմակերպություններ հիմնադրելու և այդ կազմակերպություններին, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին, Կազմակերպության անդամակցելու վերաբերյալ,

9.11 որոշում է կայացնում Կազմակերպությանն անդամագրելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ: Սահմանում է անդամավճարների և մուտքավճարների չափերը և դրանց գանձման կարգը, սահմանում է Կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները, ինչպես նաև Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը:

9.12 Կազմակերպության խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են Կազմակերպության խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

9.13 Կազմակերպության խորհուրդը իր հերթական նիստերը հրավիրում է ամիսը մեկ անգամ: Կազմակերպության խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ի գրավոր պահանջով: Կարող են հրավիրվել խորհրդի ընդլայնված նիստեր՝ Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև Կազմակերպության այլ անդամների մասնակցությամբ:

**10. Կազմակերպության գործադիր մարմինը Գլխավոր քարտուղարն է՝**

10.1 ղեկավարում է Կազմակերպության աշխատակազմը, իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարումը, այդ թվում՝ ֆինանսական գործունեությունը,

10.2 ապահովում է Կազմակերպության Համագումարի, Կազմակերպության Խորհրդի կողմից ընդունված որոշումների և հանձնարարականների կատարումը, դրանց գործունեության ուղղված բոլոր հարցերի լուծումը:

10.3 Իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ և ստորագրում է հրամաններ, կարգադրություններ, սերտիֆիկատներ, շնորհակալագրեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր, տալիս է հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ:

10.4 հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, դրույքաչափերը և Կազմակերպության աշխատակազմի կանոնակարգը, որը չի կարող հակասել սույն կանոնադրությանը,

10.5 աշխատանքի է ընդունում և ազատում է աշխատանքից Կազմակերպության աշխատակազմի հաստիքային և պայմանագրային աշխատողներին,

10.6 հաստատում է հաշվետվությունները, Կազմակերպության Համագումարին հաշվետվություն է ներկայացնում իր գործունեության մասին,

10.7 Կազմակերպության անունից գործում է առանց լիազորագրի, ներկայացնում է կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

10.8 տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքն ու դրամական միջոցները (այդ թվում՝ դրամաշնորհային միջոցներն ու անդամավճարների ֆոնդը)՝ մինչև 1 միլիոն ՀՀ դրամի չափով միանձնյա, իսկ 1 միլիոնից ավելի դրամի չափով՝ Խորհրդի համաձայնությամբ,

10.9 տալիս է լիազորագրեր, բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ, Կազմակերպության անունից վարում է բանակցություններ, կնքում պայմանագրեր և համաձայնագրեր, ստորագրում Կազմակերպության Համագումարի և Խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը,

10.10 հրավիրում է Կազմակերպության խորհրդի արտահերթ նիստեր,

10.11 մշակում է Կազմակերպության հիմնական միջոցառումների և աշխատանքների տարեկան պլանները, ծրագրերը և հսկում դրանց կատարման ընթացքը,

10.12 սահմանում է Կազմակերպության աշխատակազմում ընդգրկված անձանց (բացառությամբ գլխավոր քարտուղարի)՝ պարտականությունները կամ հանձնարարությունները կատարելիս կատարված ծախսերի փոխհատուցման և Կազմակերպության կողմից վարձատրության կարգը,

10.13 անհրաժեշտության դեպքում որոշումներ է ընդունում Կազմակերպության Գլխավոր քարտուղարին կից հասարակական կարգով ժամանակավոր հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր, ստեղծելու և լուծարելու մասին,

հաստատում է դրանց կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն կանոնադրությանը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

10.14 իրականացնում է Կազմակերպության Համագումարի և Խորհրդի կողմից իր վրա դրված այլ լիազորություններ:

10.15 Կազմակերպության գործունեության ընթացքում օրենքով և սույն կանոնադրությամբ Համագումարի և Խորհրդի իրավասությանը չվերապահված և սույն կանոնադրությամբ չկարգավորված ցանկացած հարց լուծվում է Գլխավոր քարտուղարի կողմից:

## 11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1 Կազմակերպության գույքը Կազմակերպության սեփականությունն է:

11.2 Կազմակերպության նյութական և դրամական միջոցները գոյանում են մուտքավճարներից, անդամավճարներից, տնտեսական ընկերությունների, տեղական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող նվիրաբերություններից, այդ թվում՝ դրամաշնորհներից և նվիրատվություններից, կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից, դրամական մուտքերը պետական բյուջեից, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացված միջոցները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

11.3 Կազմակերպությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ՀՀ օրենսդրությամբ չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտներ: Կազմակերպությանը պատկանող գույքը և տրանսպորտային միջոցները օգտագործվում է իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:

11.4 Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձինք (բացառությամբ Կազմակերպության Գլխավոր քարտուղարի) Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել Կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից սահմանված կարգով:

11.5 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

## 12. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

12.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել Համագումարի կամ դատարանի որոշմամբ:

12.2 սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարման հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո, մնացած գույքը, ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ՝ փոխանցում է պետական բյուջե:

12.3 սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

## 13. «ԲԱՅԱԶԵՏ» ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՊԱՏԿԵՐԸ

13.1 Կազմակերպության խորհրդանիշն ունի ստորև պատկերում տրված տեսքը և բաղկացած է հետևյալ մասերից՝

13.1.1 կարմիր երանգով լատինատառ «B» տառին նմանվող ամրոց՝ վերևի մասում,

13.1.2 լատինատառ «Bayazet Armenian Analitical Reaserch Center» գրություն՝ սև երանգով ներքևի մասում,

BAYAZET
Armenian Analytical Research Center